Պարույր Սևակ

Լեգենդը

Նա ծնվել էր այնտեղ, ուր կան լեռներ ժայռոտ,
Ուր քարափներ, կիրճեր, անտառներ կան,
Ուր ամեն քար այնպես մտերի՛մ է, ծանո՛թ,
Ամեն խութ՝ ժպտադեմ, ամեն թուփ՝ բարեկամ:
Ուր միակ թշնամին գարնան սելավն է ժանտ,
Որ սրբում էր - տանում ջրաղացը հացի,
Չթողնելով ձորում ուրիշ այլ մի նշան
Քարաշեղջից կախված նավախելից բացի:
Նա ծնվել էր այնտեղ - լեռնաշխարհում հայոց,
Ժայռաքարից կերտված մի հին տնում,
Բայց մարտնչեց, ընկավ - ընկավ իբրև հերոս
Ռուսական անափ տափաստանում:
Նույն հեղեղն էր վայրի, նույն սելավը դաժան,
Որ ուզում էր ողջը սրբել, քանդել՝
Հեռավոր Բեռլինից մինչև Կովկաս հասած,
Հեղեղ, որ ո՛չ ջրով, այլ արյամբ էր հորդել:
Նա մարտնչեց, ընկավ անափ տափաստանում,
Ուր քար չկա և ուր հողն է ավազ,
Որ այստեղ, քարաշատ, ժայռոտ Հայաստանում
Նրա ջրաղացը հայոց ցորենն աղա...
Հայոց ցորենն աղա, աղա հատի՛կ-հատի՛կ,

Առատ - ստեպների ավազի չափ,
Եվ ջրերի՛ն, ժայռի՛ն, նավախելի՛ն պատմի
Նրա կյանքի մասին... արդեն լեգենդ դարձած...

24.I.1047թ.
Երևան